



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. հունիսին /վերլուծություն/

2010թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15609 գործարքներ, որոնց քանակը 2009թ. հունիսի համեմատ աճել է 9.0%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 15.5%-ով:

2010թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3987 օտարման գործարքների 81.1%-ը կազմել են առուվաճառքները, 17.6%-ը՝ նվիրատվությունները և 1.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. հունիսին, 2010թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.4%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ նվազել՝ 1.0%-ով:

2010թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. հունիսին, 2010թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 19.9%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 6.9%-ով:

2010թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2009թ.	հունիս 2010թ.	մայիս 2010թ.
Կենտրոն	462800	478100	469500
Արաբկիր	350400	395500	392200
Քանաքեռ-Զեյթուն	271700	294300	289700
Նոր-Նորք	222600	246200	244700
Ավան	225700	249900	247900
Էրեբունի	243300	259900	252600
Շենգավիթ	235500	263800	262100
Դավթաշեն	250900	281400	280400
Աջափնյակ	235600	242300	242300
Մալաթիա-Սեբաստիա	218600	253400	251200
Նուբարաշեն	134700	147800	145900
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	259300	283000	279900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. մայիսի համեմատ, աճել են 1.1%-ով:

2010թ. հունիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 370 բնակարաններ, որոնց քանակը 2010թ. մայիսի համեմատ աճել է 34.1%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 13.5%-ով:

2010թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2009թ.	հունիս 2010թ.	մայիս 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	127200	142700	142700
	Ապարան	44000	45800	45400
	Թային	48000	53900	53400
Արարատ	Արտաշատ	87400	98000	95700

	Մասիս	120800	133900	133900
	Վեդի	85100	96500	95500
	Արարատ	89900	86600	84700
Արմավիր	Վաղարշապատ	166800	166000	165800
	Արմավիր	117500	125400	122500
	Մեծամոր	76000	85000	84900
Գեղարքունիք	Սևան	87200	98400	95600
	Գավառ	46400	47300	47300
	Մարտունի	80000	86200	86200
	Վարդենիս	33200	33200	33200
	Ճամբարակ	19200	19900	19700
Լոռի	Վանաձոր	93000	96200	95200
	Ստեփանավան	53500	58200	58200
	Սպիտակ	73800	80700	80700
	Ալավերդի	33400	32500	32000
	Տաշիր	34800	36100	36100
	Թումանյան	6100	6100	6100
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	13800	14200	14200
Կոտայք	Աբովյան	143500	162800	162400
	Նոր Հաճն	138400	131500	129700
	Բյուրեղավան	91900	106400	105100
	Եղվարդ	119200	115900	115900
	Հրազդան	61600	65100	63800
	Ծաղկաձոր	182300	181500	181500
	Չարենցավան	87200	82000	80000
Շիրակ	Գյումրի	107200	123800	120800
	Արթիկ	55100	61300	60600
	Մարալիկ	30800	30800	30800
Սյունիք	Գորիս	124600	139600	139600
	Կապան	111100	100000	100000
	Սիսիան	87600	81100	80500
	Մեղրի	54200	60000	58700
	Ագարակ	33100	33900	33500
	Քաջարան	57900	60600	59600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71200	72300	72300
	Եղեգնաձոր	109300	108200	106800
	Ջերմուկ	113900	116500	114000
Տավուշ	Դիլիջան	93300	106900	104300
	Իջևան	130500	142800	140600
	Բերդ	43100	42200	42200
	Նոյեմբերյան	34000	33900	33900
	Այրում	24000	24100	24100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. մայիսի համեմատ, աճել են 1.0 %-ով:

2010թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 413 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 116, մարզերում միասին վերցրած՝ 297: 2010թ. հունիսին, 2010թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 21.5%-ով, ընդ որում Երևանում 22.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.2%-ով: 2009թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 2.1%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 0.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 3.3%-ով:

2010թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2009թ.	հունիս 2010թ.	մայիս 2010թ.
Կենտրոն	493000	488700	487700
Արաբկիր	382000	405400	399200
Քանաքեռ Զեյթուն	298000	297000	294700
Նորք Մարաշ	299500	288100	287200
Ավան	251300	256000	251900
Էրեբունի	273000	264000	260300
Շենգավիթ	261300	269900	265900
Դավթաշեն	281000	288600	286100
Աջափնյակ	269500	251900	249400
Մալաթիա-Սեբաստիա	252000	255600	253200
Նուբարաշեն	152300	149100	148400
Միջինը Երևանում /բացի Նոր Նորքից/	292100	292200	289500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. մայիսի համեմատ, աճել են 0.9%-ով:

2010թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2009թ.	հունիս 2010թ.	մայիս 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	135200	150500	150200
	Ապարան	47900	50900	50400
	Թալին	52500	58000	56800
Արարատ	Արտաշատ	95100	102500	101700
	Մասիս	130500	138100	136900
	Վեդի	93300	101000	99700
	Արարատ	91800	93700	93600
Արմավիր	Վաղարշապատ	178800	171900	170200
	Արմավիր	126600	129500	126500
Գեղարքունիք	Սևան	95600	101100	98300
	Գավառ	54800	51900	51200
	Մարտունի	84100	90700	90200
	Վարդենիս	38000	36200	35700

	Ճամբարակ	22500	22700	22100
Լողի	Վանաձոր	97400	101400	100700
	Ստեփանավան	58100	63200	62600
	Սպիտակ	77700	84600	84400
	Ալավերդի	35600	36200	35700
	Տաշիր	37600	40300	39800
	Թումանյան	10400	10800	10700
	Շամլուղ	7400	7500	7500
	Ախթալա	18200	18200	18200
Կոտայք	Արսիկյան	153400	174400	173200
	Նոր Հաճն	143400	136600	136300
	Բյուրեղավան	102500	109800	109600
	Եղվարդ	127400	128800	128600
	Հրազդան	67700	68800	67600
	Ծաղկաձոր	288200	315600	312600
	Չարենցավան	92000	84200	82000
Շիրակ	Գյումրի	112300	127600	125600
	Արթիկ	60100	64500	63400
	Մարալիկ	34700	33500	33100
Սյունիք	Գորիս	128900	145300	145100
	Կապան	116200	105700	105300
	Սիսիան	93500	85800	85200
	Մեղրի	58600	62900	62100
	Ագարակ	35700	36000	35600
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	75100	77100	76300
	Եղեգնաձոր	115700	115800	115400
	Ջերմուկ	110400	122500	120800
Տավուշ	Դիլիջան	104300	113000	110700
	Իջևան	136600	146800	144700
	Բերդ	46900	45000	44700
	Նոյեմբերյան	36500	36500	36200
	Այրում	25800	26000	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. մայիսի համեմատ, աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1378 միավոր /773.50 հա/ հողեր, որից Երևանում՝ 67 միավոր /5.09 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 681 միավոր /655.50 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 512 միավոր /65.53 հա/, որից Երևանում՝ 49 միավոր /2.62 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 157 միավոր /47.28 հա/, որից Երևանում՝ 16 միավոր /2.08 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /2.39 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.37 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 4 միավոր /0.22 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /0.58 հա/ ընդհանուր մակերեսով,

- ջրային հողեր՝ 1 միավոր /2.00 հա/:

2010թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1220 միավորի /713.12 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 55 միավոր /3.38 հա/, նվիրատվության գործարքներ՝ 142 միավորի /56.62 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.72 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /3.77 հա/:

Հանրապետությունում 2010թ. հունիսին, 2009թ. հունիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 7.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 23.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 204.50 հա, որից 199.63 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.0%-ը կամ 305 գործարքներ /107.39 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 6 գործարքներ /0.10 հա/, իսկ 73.2%-ը կամ 893 միավորը /514.98 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 47 միավոր /3.24 հա/:

2010թ. հունիսին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 22 գործարք /90.74 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	1	0.01	5	0.09	1	0.02	1	0.37	38	1.99	7	0.86
Արագածոտն	19	18.83	0	0.00	0	0.00	12	0.76	61	42.17	0	0.00	31	22.84	2	0.13
Արարատ	9	22.24	0	0.00	3	0.23	1	0.005	28	11.24	0	0.00	48	3.94	1	0.003
Արմավիր	7	27.01	3	0.25	3	0.11	3	0.08	55	172.62	0	0.00	43	4.41	4	0.02
Գեղարքունիք	6	7.70	0	0.00	29	2.73	13	1.78	95	44.16	0	0.00	11	1.28	3	0.02
Լոռի	8	3.73	5	0.76	13	1.06	32	1.91	116	63.48	0	0.00	11	0.82	3	0.02
Կոտայք	12	6.12	0	0.00	17	1.35	5	0.25	92	46.58	2	0.21	84	7.32	14	29.12
Շիրակ	0	0.00	2	0.71	23	1.27	8	0.18	18	24.25	0	0.00	7	1.78	2	2.03
Սյունիք	0	0.00	0	0.00	1	0.07	9	0.32	17	18.61	0	0.00	42	2.93	1	0.01
Վայոց Ձոր	3	0.23	0	0.00	4	0.29	8	1.65	15	4.65	0	0.00	4	0.24	1	0.13
Տավուշ	2	0.59	0	0.00	28	1.96	4	0.56	10	2.99	0	0.00	17	3.53	1	0.002
Ընդամենը	66	86.45	10	1.72	122	9.08	100	7.59	508	430.77	3	0.58	336	51.08	39	32.35

Ստորև ներկայացվում է 2010թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի

նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
ամս	6	0.10	0	0.00	1	0.01	5	0.09	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
ազաժոտն	1	0.11	0	0.00	0	0.00	1	0.11	30	19.48	19	18.83	0	0.00	0	0.00	11	0.65
արատ	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	10	20.76	7	20.53	0	0.00	3	0.23	0	0.00
մավոր	1	0.05	1	0.05	0	0.00	0	0.00	15	27.41	7	27.01	2	0.21	3	0.11	3	0.08
ղարբունիք	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	47	12.21	6	7.70	0	0.00	29	2.73	12	1.78
ի	5	0.02	0	0.00	1	0.01	4	0.01	53	7.44	8	3.73	5	0.76	12	1.05	28	1.90
տայր	11	0.93	0	0.00	9	0.89	2	0.04	23	6.78	12	6.12	0	0.00	8	0.45	3	0.21
ակ	8	0.15	1	0.01	2	0.01	5	0.13	25	2.00	0	0.00	1	0.70	21	1.25	3	0.05
ունիք	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	6	0.37	0	0.00	0	0.00	1	0.07	5	0.30
յոզ Ձոր	2	0.15	0	0.00	1	0.09	1	0.06	11	1.90	1	0.10	0	0.00	3	0.20	7	1.60
վուշ	2	0.05	0	0.00	0	0.00	2	0.05	32	3.06	2	0.59	0	0.00	28	1.96	2	0.51
ըամենը	42	1.58	2	0.06	14	1.01	26	0.51	252	101.41	62	84.61	8	1.67	108	8.05	74	7.08

Հանրապետությունում 2010թ. հունիսին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 4 գործարքներ /1.85 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. հունիսին, 2009թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն նվազել է 28.8%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 2-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 28.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 16.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 30.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 37.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 20.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	17	16.13	53.7	222.8	104.6	47	32.11	365.0	12000.0	4370.0
Ապարան						2	0.50	86.5	2727.3	590.0
Թային	2	2.71	44.4	111.5	77.9	8	7.56	93.6	5494.5	546.2
Ծաղկահովիտ						4	2.00	79.5	1000.0	241.5
Արարատի մարզ										

Արտաշատ	6	10.37	65.1	2260.0	1001.7	9	3.95	335.1	10833.3	2325.5
Մասիս						8	2.41	200.0	11904.8	3038.8
Վեդի	1	10.15	994.3	994.3	994.3	10	4.01	207.0	10795.1	1805.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	9.00	35.7	1614.9	447.4	20	11.36	294.3	9090.0	1254.8
Բաղրամյան	3	18.01	71.0	366.2	169.5	10	78.91	90.6	2561.1	706.8
Վաղարշապատ						25	82.34	444.4	11764.7	3205.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						79	30.43	199.8	1875.0	405.0
Ճամբարակ	3	4.40	156.7	247.0	215.4	8	3.25	60.5	953.3	290.5
Մարտունի						2	0.30	51.1	2850.0	630.0
Սևան	2	1.50	225.0	253.3	239.2			52.2	2134.8	255.8
Վարդենիս	1	1.80	59.4	59.4	59.4	6	10.18	41.2	2575.1	455.6
Լոռու մարզ										
Այվազ						22	8.79	170.4	6424.2	840.0
Գուգարք						39	11.76	234.6	6065.9	1090.8
Սյիտակ	4	1.64	414.0	745.5	497.7			250.0	5555.5	640.5
Ստեփանավան	4	2.09	302.6	944.9	574.1	9	8.47	90.6	1686.6	345.5
Տաշիր						46	34.46	45.3	1384.4	176.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	2.61	73.9	590.4	268.9	34	14.05	279.3	11942.7	4601.8
Եղվարդ	5	3.51	222.8	3881.6	2457.5	45	27.57	174.4	11971.8	3477.6
Հրազդան						9	4.76	130.5	10256.4	1785.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	11.11	252.0	1693.1	548.6
Ամասիա						1	2.11	40.9	261.0	128.6
Անի						6	4.72	110.6	546.9	308.5
Աշոցք						2	4.98	58.5	215.8	108.7
Արթիկ						2	1.34	79.4	1428.6	282.3
Սյունիքի մարզ										
Գորիս						4	8.19	92.6	1023.2	536.8
Կապան								120.0	841.6	300.5
Մեղրի						7	1.90	193.0	3000.0	640.2
Սիսիան						6	8.52	46.3	1977.4	335.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						10	2.76	125.0	10000.0	1645.5
Վայք	1	0.10	182.9	182.9	182.9	5	1.89	58.8	1430.7	510.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.95	213.3	3783.8	572.5
Իջևան	2	0.59	148.2	149.3	148.7	2	0.25	267.5	9454.5	1130.0
Նոյեմբերյան						6	1.79	46.7	7368.4	835.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						29	225978.0	130.7	22200.0	2571.6
Ապարան						2	2398.0	124.1	609.6	280.0
Թային								63.2	1454.8	144.0
Ծաղկահովիտ								60.0	214.3	79.0
Արարատի մարզ										
Արտաշատ	2	1962.0	181.2	181.2	181.2	11	10051.0	173.9	7140.3	894.0
Մասիս						31	23355.0	187.5	25000.0	1217.0
Վեդի	1	375.0	687.7	687.7	687.7	5	5013.0	126.1	5000.0	661.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	1135.0	1350.0	1350.0	1350.0	10	12677.5	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						1	2306.0	100.0	833.3	195.0
Վաղարշապատ						32	29071.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	25	25426.0	183.3	285.0	267.0	6	5430.0	186.6	1084.3	490.0
Ճամբարակ								71.3	2286.2	144.4
Մարտունի	2	832.0	113.7	118.8	116.2	3	4300.0	119.3	5000.0	274.8
Սևան	2	1000.0	118.5	465.9	292.2			240.0	3110.4	235.0
Վարդենիս						2	3020.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	16.0	114.3	1388.9	212.5
Գուգարք	5	1171.0	2198.3	3381.0	2511.6	4	2655.0	77.9	14083.3	810.0
Սպիտակ	7	9348.0	47.7	72.2	64.6	4	4520.0	104.9	1348.3	199.2
Ստեփանավան						1	400.0	88.2	1666.7	154.5
Տաշիր						1	590.0	45.3	400.0	80.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	7	4049.0	414.1	3051.9	2244.2	45	40571.0	264.5	35353.5	2000.0
Եղվարդ	1	485.0	2985.6	2985.6	2985.6	33	28355.0	173.6	27000.0	2860.0
Հրազդան						6	4227.0	117.7	34848.5	1331.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	840.0	1150.0	1600.0	1416.7	5	4024.7	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	407.1	464.9	426.5	1	790.0	67.9	180.6	132.0
Աշոցք						1	13000.0	40.8	144.0	60.0
Արթիկ	15	10500.0	52.5	580.8	246.0			111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	4493.0	112.2	1700.0	315.0
Կապան	1	670.0	1366.2	1366.2	1366.2	38	24805.0	67.9	2638.9	253.5
Մեղրի								68.5	632.9	156.5
Միսիան								123.5	875.0	164.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	2420.0	96.7	7659.6	445.0
Վայք	3	2000.0	854.0	1323.0	1010.3			120.7	1448.3	171.5
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	28	19648.0	437.2	3000.0	2908.5	14	32708.0	74.1	14423.1	480.1
Նոյեմբերյան						3	2590.0	125.0	1948.1	172.0

2010թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 13 գործարքներ 2.02 հա մակերեսով, ընդ որում 3-ը` /0.33 հա/ Լոռու և 10-ը` /1.69 հա/ Շիրակի մարզերում:

2010թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1083 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. հունիսին, 2010թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 17.0%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ նվազել՝ 21.4%-ով:

2010թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 452 հասարակական, 61 արտադրական նշանակության օբյեկտների, 439 միավոր /2749.63 հա/ հողերի 53 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 17 վարձակալության գործարքների /այդ թվում 12 միավոր՝ 4.86 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. մայիսի համեմատ նվազել է 10.5%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 37.0%-ով: 2010թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 2749.63 հա հողերից 5.28 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2744.35 հա հողերի 39.83 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.88 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 1247.55 հա, որից 1245.06 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 80.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	41	200.40
Արարատ	0	0.00	6	57.39
Արմավիր	0	0.00	23	65.35
Գեղարքունիք	2	80.00	39	1165.06
Լոռի	0	0.00	37	159.38
Կոտայք	0	0.00	11	252.20
Շիրակ	0	0.00	64	550.70
Սյունիք	0	0.00	60	144.55
Վայոց Ձոր	0	0.00	5	0.38
Տավուշ	0	0.00	17	21.49
Ընդամենը	2	80.00	303	2616.90

2010թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2155 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. մայիսի համեմատ, աճել է 27.1%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 67.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /41.3%/, առանձնատների /22.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.4%/ և հողերի /11.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում

անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1037 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. մայիսի համեմատ, աճել է 31.3%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ 76.4%:

2010թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 1460.56 հա հողեր, որից 15.12 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 97.4%-ը կամ 1422.49 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.84 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1025.86 հա, որից 1025.25 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2010թ. հունիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 167 գործարքներ, որից 116-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 77.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16.8%-ն՝ անհատական բնակելի տների, 2.4%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.6%-ն՝ ավտոտնակների, 3.0%-ն՝ հողերի, այդ թվում՝ 2.4%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, նկատմամբ: 2010թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 8.4%-ով, ընդ որում Երևանում՝ 0.9%-ով, իսկ մարզերում՝ 30.8%-ով: 2009թ. հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.3 անգամ, մարզերում՝ 2.8 անգամ:

2010թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 գործարք՝ Շիրակի մարզում, որն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2010թ. մայիսի համեմատ, մնացել է անփոփոխ, իսկ 2009թ. հունիսի համեմատ՝ նվազել 66.7%-ով:

2010թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2292 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. մայիսի համեմատ աճել է 30.2%-ով, իսկ 2009թ. հունիսի համեմատ նվազել՝ 17.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.5%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե